ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

20 հոկտեմբերի 2017թ. թիվ 211

Վ.ՉԱԼԱԲՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 176 հոդվածի, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հաշվի առնելով Վ.Չալաբյանի դիմումը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վալիկո Չալաբյանին տրամադրել չվճարվող արձակուրդ ս/թ հոկտեմբերի 26-ից 31-ը ներառյալ՝ 6 օրացուցային օր:

2. Վ.Չալաբյանի արձակուրդում գտնվելու ժամանակ «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունների կատարումը դնել «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ Իվետա Պետրոսյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2017թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր